

հանդերձին գոր մեր մտածումը պետք է հագնի այսուհետեւ, եւ վաղո՛ւց, թէ բառերու եւ ձայներու որպիսի՝ աղքատացում, բայց անպէտ աւելորդ վանկերու որպիսի խճողում միանգամայն հարկադրուած են լեզուին, թէ ինչպէս պարտաւորուած ենք ամէնքս ալ, ափսո՛ս, աւելի պարզ, աւելի արձակունակ, աւելի ռամիկ եւ մերթ աւելի գեղջուկ, եւ յաճախ յոյժ նուա՛գ հանրահայկական տարագի մը հանդուրժել: Սեթեան կը թուի չլսել բոլոր այն քրթմնջիւնները որ կը բարձրանան ամենայնի դէմ որ հին – ազգային աւանդութիւն է եւ կը յաւակնի այժմէութիւն մնալ, բայց որ ներկային մէջ դանդաղացման ու զարտոնուման ու նոյն իսկ յետս դարձի սկզբունք մը կը թուի: Որովհետեւ Յովհ. Սեթեան ի նկատ կ'առնէ միայն իր հայերէնագիտութեան. իր պատկերալից ու ձայնահարուստ տաղաչափութեանն ու արձակին հայրենի իրաւունքները, եւ գոզցես նաեւ աւանդութեանց պահպանմամբ եւեթ տեսելու սկզբունքով՝ պարտաւորութիւնն ուրեմն աւանդապահութեան:– Իր այն նորագոյն բացառիկ էջերուն մէջ որ նուազ տեսլապաշտ ու նուազ անդրաշխարհիկ եւ աւելի յուսահատ է Սեթեան, ուրեմն ո՛չ աւանդապահ, հո՛ն արդարեւ իր լեզուն աւելի մերկ է գրաբարի զարդերէն ու զանակներէն – եւ պիտի կարդայի ձեզ այդ կտորները, եթէ Սեթեանի այս տեսակ մը ինքնուրացութիւնն ինծի հաճոյ ըլլար:– Սակայն արդարեւ, խիստ յաճախ, անոր զգայասէր, խանդաղատ ու հիացիկ հոգւոյն մայրենի լեզուն է հայերէնը. եւ եթէ ո՛չ միշտ հայրենիքի բանաստեղծ մը կամ հայրենիքի հայ մը, բայց յաւէտ հայերէնի բանաստեղծ մը, հայերէնի՛ հայ մըն է Յովհ. Սեթեան: Ո՛հ, իր ազգասիրութեան գեղեցկագոյն ձեւն է իր սէրն առ ազգային լեզուն. իր ճշմարիտ, իր սքանչելի հայերէնագիտութիւնն իր հայու առաքինութիւնն է: Այսպէս էր նաեւ մեծամասնութեան մէջ այն միւս մեծանուն գրագէտներուն, որոնց ազգասիրութեան մէկ գերազանց ապացոյցն իրենց լայն ու խորին տիրացումն էր լեզուին, անոր անցեալն ու ներկան միանգամայն ընդգրկող: Ստոյգիւ, սիրել լեզու մը եւ տիրանալ անոր,